ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը Երևան քաղաքում,

2) մշակում և իրականացնում է ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրեր,

3) մշակում և իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանությանն ու հասցեական օգնությանն ուղղված ծրագրեր,

4) հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին, բացահայտում նրանց մասին տեղեկությունները, իրականացնում տնայցեր՝ կարիքների գնահատման, սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրերի կազմման և վերահսկման նպատակով,

5) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարիքների ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա տալիս է եզրակացություն երեխային մանկատուն տեղավորելու մասին։ Տրված եզրակացության մեկ օրինակն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և խնամակալության ու հոգաբարձության մարմիններին պատվիրակված լիազորություններն իրականացնող Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին,

6) ծնողի դիմումի և ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրման հիման վրա տալիս է եզրակացություն երեխային խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին։ Տրված եզրակացության մեկ օրինակն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

7) ծնողի դիմումի, կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա տալիս է եզրակացություն երեխային մանկատնից կենսաբանական ընտանիք

վերադարձնելու մասին։ Տրված եզրակացության մեկ օրինակն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

8) ծնողի դիմումի հիման վրա տալիս է եզրակացություն երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունից երեխային դուրս գրելու մասին, տրված եզրակացության մեկ օրինակն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

9) վարում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ավտոմատացված տեղեկատվական համակարգը,

10) խնամակալության և հոգաբարձության մարմիններին պատվիրակված լիազորություններն իրականացնող Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներից ստացված տեղեկատվության հիման վրա.

ա. լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանը,

բ. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց քարտերի պատճենները 3 օրվա ընթացքում ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,

գ. տարածքային հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակի իրավական հիմքերի փոփոխման դեպքում 7-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը,

դ. մասնակցում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը,

11) որդեգրել ցանկացող, Երևան քաղաքում բնակվող ՀՀ քաղաքացուց ստացված դիմումի և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ու նրա կենսապայմանների

ուսումնասիրության ակտի հիման վրա տալիս է որդեգրման հնարավորության մասին եզրակացություն,

12) դրական եզրակացության հիման վրա որդեգրել ցանկացող անձի համար կազմում է անձնական գործ, հաշվառում է որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցում է հաշվառման մատյանում, լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և հաշվառման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում որդեգրել ցանկացող անձի անձնական գործի պատճենահանված օրինակն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,

13) որդեգրման հնարավորության բացասական եզրակացության մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմողին։

14) իրականացնում է որդեգրման ենթակա երեխաների հաշվառումը, լրացնում է նրանց անձնական քարտերը, կազմում է որդեգրման ենթակա երեխայի անձնական գործ և հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում անձնական գործի պատճենահանված օրինակն ուղարկում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար,

15) որդեգրողի թեկնածուին՝ տրամադրում է տեղեկություններ որպես որդեգրման ենթակա հաշվառված երեխաների մասին։

16) դատական վճիռների հիման վրա հաշվառումից հանում է որդեգրված երեխաներին և որպես որդեգրողի թեկնածուներ հաշվառված քաղաքացիներին։

17) խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձի դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կատարում է այդ անձի կենսապայմանների ուսումնասիրություն և կազմում համապատասխան ակտ, ինչպես նաև 5-օրյա ժամկետում տալիս է խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն,

18) խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին բացասական եզրակացության դեպքում, եզրակացության հետ մեկտեղ դիմումատուին է վերադարձնում նրա կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերի բնօրինակները՝ պատճենները պահպանելով բաժնում,

19) ապահովում է Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի միջև ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցները խնամատար ընտանիքին տրամադրելու մասին պայմանագրի կնքման և ֆինանսավորման հայտ-պահանջագրերը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացնելու գործընթացը,

20) իրականացնում է կրթությունից դուրս մնացած և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը։

21)Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացության և ծնողի դիմումի հիման վրա կազմակերպում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման գործընթացը,

22) ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համատեղ քննարկում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների տեղավորման հետ կապված կողմնորոշման խնդիրները, պաշտպանում է անչափահասների իրավունքներն ու շահերը,

23) աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքերում,

24) ուսումնասիրում է Երևան քաղաքում գենդերային հիմնահարցերը, մշակում դրանց լուծմանն ուղղված ծրագրեր, Երևան քաղաքում գենդերային քաղաքականությանն ուղղված միջոցառումների տարեկան ծրագիրը ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

25) Երևան քաղաքում հայտնաբերված կանանց և երեխաների առքուվաճառքի (թրաֆիկինգի) զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է ՀՀ աշխատանքի և

սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ ոստիկանություն,

26) քաղաքապետին է ներկայացնում երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը,

27) երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին է ներկայացնում բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվություն,

28) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ։